

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՊՈՆՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 891.981 – 1 Սևակ
ԳՄԴ 84Հ – 5
Ս 411

Կազմող՝ Արմեն Ղազարյան

Խմբագիրներ՝ Սևակ Ղազարյան
Արմեն Ավանեսյան

Ս 411 Սևակ Պարույր
Պոեմներ / Պ. Սևակ. – Եր.: Արմավ, 2017. – 656 էջ:

Գիրքն իր տեսակով բացառիկ է, քանզի մեկտեղվել են Պարույր Սևակի բոլոր պոեմները: Երբորդ հրատարակութունն է:

ՀՏԴ 891.981 – 1 Սևակ
ԳՄԴ 84Հ – 5

ISBN 978 – 9939 – 9107 – 3 – 4

© Ղազարյան Արմեն, 2017
© Արմավ, 2017

ՊՈՆՄՆԵՐ

ԱՆՀԱՇՏ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Չափաձո վիպակ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱԼԱՏԸ

1

Ծիծեռնակների և սարյակների շուտասելուկից
Թորգոմն արթնացավ: Դեռ արև չկար:
Հեռվում երկինքը շառագունել էր արևածագից՝
Գծելով ծանոթ մի բնանկար:

Կաթնագույն մուժը, մացառների մեջ ծվեններ թողած,
Դանդաղ ցրվում էր այգուց ու բակից,
Լայն պատշգամբում ավելուկների հյուսերը կանաչ
Օրորվում էին մեղմիկ ու հանգիստ:

Բացվում էր օրը: Գյուղն արթնացել էր արևից առաջ:
Նոր թխած հացի բուրմունք էր գալիս:
Պարզորոշ լավեց հորթուկին կանչող մի կովի բառաչ,
Մի բահ զրնգաց՝ զարնվելով քարին:

Թորգոմը նստեց: Ինչ-որ ծանրութուն ճնշում էր հոգին,
Ծանրացած գլխում կարծես թե կար մեզ:
Այդպես է լինում հետևյալ օրը թունդ գինարբուքի:
Իսկ նա չէր խմել: Որտե՞ղ էր երեկ:

Եվ հիշեց հանկարծ, ու քունը փախավ: Վեր թռավ տեղից:
Արևն էր ելնում պոնկից լեռան:
Լեռնալանջերին թառած արտերը կանաչագեղին
Շեղեցին մի պահ մտքերը նրա:

Շուտով դեզերը շուրջպար կբռնեն արձակ կալերում
(Ոսկեվորվում են արտերը արդեն),

Վրա կհասնեն բերքահավաքի օրերը եռուն,
Մինչ շենքն ակունքի անավարտ է դեռ:

Եվ մոռանալով այն ծանրությունը, որ մի պահ առաջ
ճնշում էր հոգին, ժպտաց ինքնագոհ:
Շքեզ շինություն կամարները կոր և թեւատարած
Ողորկ սյունները կապույտ երանգով:

Վերստին նրա սիրտը լցրեցին խնդությունք այն տաք,
Որ լավ ծանոթ է սիրահարվածին:
Եվ նախագահի՝ Թորգոմի սրտով անցավ մի խայտանք,
Երբ աչքը ընկավ շենքի զանգվածին:

Ակունք էր կոչվում, բայց իրականում պալատ էր չքեղ,
Սյունաշարավոր շրջանը նրա
Գյուղի կենտրոնում բազմել էր խրոխտ ու կամարագեղ,
Ինչպես նոր բլուր՝ բլուրի վրա:

... Երբ պատերազմը վերջացավ փառքով, երբ վերադարձան
Հաղթողներն իրենց տները նորից,
Ամեն գյուղի մեջ բարձրացավ մի սեզ Աղբյուր-հուշարձան՝
Սրբատաշ բազալտ և կամ տուֆ քարից:

Թորգոմն էլ հայտնի իր սովորությունք՝ կառուցել տվեց
Իր լավագույնը լավերի շարքում.
Ուրիշներինը մեկ ծորակ ուներ, իսկ սա ուներ՝ վեց,
Մեկ կամարի տեղ սա ուներ երկու:

Հետո շինություն գովելի տենդը գյուղից գյուղ անցավ.
«Նոր ուղին» շինեց նոր գրասենյակ,
Ամբողջ մի տարի խոսք ու զրույցի առարկա դարձավ
«Կարմիր դրոշի» ակունքը մենակ:

Վարդաձորեցիք ետ չմնացին իրենց դրացուց.
Տանձուտան իր հերթին հետևեց նրան:
Ամեն մի կողմով ճարտարությունն իր դրել էր ի ցույց:
Մրցման մեջ էին գյուղերն հարևան:

Սովետաշենը դեռ չէր երևում: Չգիտես ինչո՞ւ,
Դեռ դանդաղում էր Թորգոմը, լոռում:
Սակայն շրջանում շատ լավ հայտնի էր, որ ամեն ինչում
Նա լավագույնն է լավի մեջ սիրում:

Նա սպասում էր համագյուղացի ճարտարապետին,
Որին և հայտնել բավականությունը,
Թե կառուցելիք իր նոր ակումբը անպատճառ պիտի
Իր ձևով անշուշտ, ոչ թե մեծությունը,

Խիստ նման լինի փառահեղ շենքին այն օպերայի,
Որ կառուցվել է մայրաքաղաքում:
Փոքրիկ մի Մասիս՝ նա պիտի ուղիղ Մասիսին նայի,
Միակը լինի ողջ շրջակայքում:

Նա պիտի բազմի գյուղի կենտրոնում, բլուրի վրա,
Իսկ հետագայում՝ ճառագայթաձև
Լայն փողոցները պիտի գան հեռվից և հասնեն նրան՝
Նոր գյուղին տալով մեծ անիվի ձև:

Գրասենյակը, դպրոցը, շենքը հիվանդանոցի
Ուրվագծում են արդեն հենց հիմա
Մոտավոր տեսքը գյուղի առաջին այն նոր փողոցի,
Որ և կասֆալտի՝ քաղաքի նման:

Նորավարտ հսկա պահեստի շենքով սկիզբ է առնում
Երկրորդ փողոցը, որ արդեն, նայի՛ր,

Էլեկտրադացով ու դարբնոցով է հիմա վերջանում
Եվ ձգտելու է այս օպերային...

Իսկ բնակելի տների շարքը կձգվի հետո,
Կողսոզը քիչ էլ երբ հարստանա:
Ամեն ինչ կլինի, ամեն ինչ, այո՛, միայն թե հերթով:
Նախ՝ այսպես պալատը պիտի վերջանա:

Իսկ այդ պալատը, թեկուզ անցել է մեկ ու կես տարի,
Դեռ նոր է միայն իր ձևն ստանում:
Շինանյութերով ծածկված բլուրի բարձր կատարին
Նրա մի հարկն է միայն բարձրանում:

Դե ստիպված ես բերքահավաքի եռուն շրջանում
Եվ բրիգադից շինարարական
Շատերին վերցնել, որ հնձի գնան, աշխատեն կալում՝
Բրիգադներում դաշտավարական:

Վրա է հասնում ամառը նորից: Պետք է շտապել,
Որ սյունաշարը գոնե վերջանա...
Եվ «բարի լույս»-ը ստիպեց հանկարծ նրան սթափվել:
Աղջիկն էր կանգնած Թորգոմի առաջ:

– Ինչպե՞ս ես, հայրի՛կ, ի՞նչ է պատահել, ինչ շա՛տ ես
քնում, –

Վերհիչել տվեց ձայնը աղջրկա
Անցյալ գիշերվա վարչության նիստը, վեճի առարկան,
Եվ վիրավորված դառը վերհուշից՝
Նա պատասխանեց.

– Շնորհակալ եմ, ընկեր Երազիկ,
Լավ ծեծից հետո միշտ լավ են քնում:

Եվ երեսայի խոռովկան տեսքով, Թորգոմը դժգոհ
Բարձրադիր տնից ցած իջավ արագ:

Անփույթ սուլոցով անցնում էր հանդարտ չորորվող այգով
Ամառնամուտի զեփյուռը բարակ:

2

Թորգոմն իջավ: Աչքի առաջ
Գյուղն էր փովել թեատարած՝
Ծանոթ այնքան և անճանաչ:
...Ձկան արդեն տներն այն խեղճ,
Խոնավ, մթին ու ծխախեղդ,
Կքված, թեքված իրար վրա՝
Մեկը վերև, մեկը՝ ցածում,
Մեկը մեկից խարխուլ ու ծուռ...
Հյուղակներն այն, որոնց վրա
Փովում էր մի համատարած,
Խարխուլ կտուր – բարձր մի տեղ,
Մի տեղ ցածր. կտուր, որտեղ
Որ վերևից դիտող մեկին
Պիտի թվար մի անսխտեմ
Ինչ-որ շենքի անկապակից
Չվերծանվող հատակագիծ...
Կտուրներն այն, որոնց վրա
Խոտն էր աճում դեղնականաչ,
Կտուր, որտեղ ծուռտիկ մեջքով,
Իր խակ տեսքից ինքն էլ դժգոհ,
Խոտի դեզն էր թառում, որի
Ավելի խեղճ օրինակը՝
Ծուռտիկ դեզը չոր աթարի
Ջարդարում էր տան նեղ բակը...
Իսկ ճեղքերից խարխուլ դռան
Ներս էր խուժում մայրամուտին
Հոնդացող քամին լեռան՝
Ստիպելով պառավ տատին

Սոսնձի տեղ խմոր քսել
 Այդ ճեղքերին լայնաբերան
 Ու փակցընել նրանց վրա
 Ինչ-որ թղթեր դեղնած ու սև՝
 Չիմանալով, որ իր ձեռքին
 էջերն են հին ժամագրքի...

Անց է կացել քանի՞ տարի:
 Իսկ հապա դու շուրջդ նայիր:
 Նոր քարաչեն տներն ահա
 Իրենց արձակ պատշգամբով,
 Այգիներն սաղարթն ահա՝
 Ալիքավոր իրենց թմբով.
 Լայն խճուղին, որ գետի պես
 Հեռվից եկել ու վարարել,
 Նեղ ու ծուռտիկ քուչաների
 Կերպարանքն է ջնջել տարել:
 Եվ դպրոցին հապա նայիր՝
 Տուֆաքարե այս հսկային,
 Նայիր կալին կոլխոզային,
 Որ այնպես է հարթված ու լայն,
 Ասես լինի մեծ քաղաքի
 Օդանավի արձակ կայան:
 Եզրին նրա, իրար հանդեպ,
 Մեծ ու Փոքր Մասիսների
 Ոստաբարո հայացքի դեմ,
 Բարձրանում են երկու մեծ դեզ,
 Ինչ դեզ: Կարծես մեկը դիտմամբ
 Մտածել էր խոտից սարքել
 Մեծ ու Փոքր Մասիսների
 Հսկայական երկու մակետ...

3

Իրարանցում է գոմերի առաջ:
Ասես ողջ գյուղը քնից վեր թռած
Ոտքի է ելել, հավաքվել այնտեղ:
Դեռ առավոտը չի բացվել կարգին,
Լոկ հորիզոնն է սփրթնել տեղ-տեղ,
Մինչ քարափներում, լանջերում լեռան
Գիշերվա մութն է դեռ նստել հանգիստ:

Վաղ առավոտվա մթնոլորտը ջինջ
Լցված է հիմա հազար ձայներով:
Դոփելով հողը իր սմբակներով՝
Զիլ խրխնջում է հովատակ մի ձի,
Եվ կարծես դադված այդ հզոր կանչից,
Տրտինգ է տալիս զամբիկը ջահել՝
Պատրաստ մոտակա սարերն արչավել:

Հարևան գոմում՝ հորթ, երինջ ու կով,
Եվ փոքր-ինչ այն կողմ՝ հոտը ոչխարի:
Այնտեղ էլ արդեն այծի մկմկոց,
Հորթերի բառաչ ու մայուն գառի:
Եվ մեծ զարթոնքից այդ ազմըկալի
Նույնիսկ արևն է քնից արթնանում,
Ուր մնաց մարդիկ, որ արդեն վաղուց
Ոտքի են ելել, գնում են գալիս:

– Շուտ արա, ա՛յ մարդ, օրը ճա՛շ դառավ, –
Ամբողջ կալով մեկ զիլ ձայնն է թնդում
Նորից Հեղուչի, որ ամեն տարի
Դանդաղելու մեջ մարդուն կշտամբում,
Շտապեցնում է, ինքն էլ շտապում,
Եվ ամեն տարի (դարձել է առած)
Յայլաղ է հասնում ամենից առաջ:

Իսկ նրա մարդը, Հայտնի գառնարած,
 Որ հանգերով է շատ հաճախ խոսում,
 Եվ այդ պատճառով կոլխոզում նրան
 «Առանց քյամանչի աշուղ» են ասում, –
 Հենց այդ խոսքին է կարծես սպասում.
 – Օրը ճա՛շ դառավ, օրը ճա՛շ դառավ...
 Ա՛յ դու երեսուն տարեկան պառավ,
 Դու էդ քո ստով գլուխս տարար:
 Թե ճաշ չի դառել, թող դառնա խաչի՛լ,
 էլ բավակա՛ն է, հոգիս մի՛ մաշիր:
 Ես չունեմ քեզ հետ էլ ոչ մի հաշիվ:
 Ոչ օրն է հինը, ոչ էլ Արտոն.
 Իմ շալակի տեղ՝ ահա ՁԻՍ ավտոն:
 Դե, խնդրեմ նստիր, ուր կուզես քչիր,
 Եվ թող, որ Արտոդ իր հօտը քչի...

Պատճառելով ուրախ ծիծաղ՝ իսկույն Արտոն
 Իր գառների հոտն է քչում սարահարթով:
 Ոչխարների հոտերն արդեն հավանաբար
 Կես են անում յայլազ տանող սարի ճամփան:
 Այգաբացին ոչ նախիրն է մնում տեղում,
 Ոչ ձիերի երամակը:

Այսպես՝ գյուղում
 Երբ արտերում հասկակալած
 Իր ճտերով հավն է կորչում,
 Երբ դաշտերում ծաղիկ-կանաչ
 Ոտոհնձի են մարդկանց կոչում,
 Երբ կարող են նախիր ու հոտ,
 Չունենալով արձակ արոտ,
 Ամեն վայրկյան տալ մի վնաս,
 Բերան զարկել ցորեն-գարուն, –

**Ֆերմաները գյուղը թողած
Դեպի յայլաղ են բարձրանում:**

Եվ մինչ Արտոն խոսքից հետո իր հանգալից
Անմիջապես հոտն է շարժում ու ու գառի,
Մեքենավար Արչավիրը ՁԻՍ-ն է իսկույն գործի ղնում:
Կթվոր կանայք աղմկում են, կանչում, գոչում՝
Խլացնելով անգամ ձայնը մեքենայի:
Երեխեքը թովում են ավտոյի շուրջ՝
Խանգարելով սրա-նրա շտապ քայլին:

Կիսով բարձված ՁԻՍ մեքենան
Ջբաղեցնում է մեկ-մենակ
Հեղուչն իր յոթ տղաներով:
Դե ի՛նչ կասես, հո հասարակ
Կթվոր չէ նա, այլև արդեն
Տե՛ս. «Մայրական փառք» ստացած
Հերոս մի մայր,
Որի համար
ՁԻՍ-ն էլ քիչ է, եթե կուզեք:
Դե, ինքներդ ահա տեսեք:

Յոթ երեխա՝ իրար նման,
Ասես ելած լոկ մի ձվից,
Նույն մազերը՝ սաթի նման,
Նույն աչքերը՝ ծովից ծավի,
Հագուստներն իսկ իրար նման՝
Նույն կտորից ու նույն ձևի:

Յոթ երեխա՝ յոթն էլ տղա
Եվ յոթի մեջ՝ ոչ մի աղջիկ:
– Դե պատճառը հենց էդ եղավ, –
Հեղինեն է մեկ-մեկ բացվում, –

Ուզում էի ծնվի աղջիկ,
 Բայց ծնվում էր նորից տղա,
 Նորից էի բախտս փորձում,
 Եվ էդպես էլ աղջիկ չեղավ...

Եվ Հեղինեն շրջապատված
 Իր յոթ կայտառ տղաներով,
 Գլխին կապած կապույտ լաչակ,
 Հագին գոգնոցը սպիտակ,
 Իր աչքերով մեծ ու վճիռ
 Ծիծաղում է չարածճի...

4

Յայլաղ տանող ճամփան բանուկ
 Ասես երկինք է քեզ տանում:
 Զգվում է նա ոլորվելով,
 Մեկ՝ ընկնելով, մեկ՝ ելնելով.
 Կախվում է նա կիրճի վրա՝
 Ասես նրա խորքն է չափում.
 Թառում է նա լանջին լեռան՝
 Ասես խաղում «տափուկ-տափուկ».
 Հետո կատարն է բարձրանում՝
 Ասես մի պահ շունչ է առնում
 Այն կալաչափ տափարակին,
 Ուր երբ արևն է խոնարհվում,
 Թվում է, թե ձեռքը պարզես
 Կհասցնես արեգակին:

Եվ չնայած արևն այդքան
 Մոտ է թվում այդ կատարին,
 Բայց և այնպես բոլոր տարին
 Նրա վրա ձյուն կա ու կա:

Սարն էլ հսկա գնդի նման
Կլոր՝ ասես հղկված ձեռով,
Հասկանալի այդ պատճառով
Գնդասար է կոչվում հիմա:

Հեղուչն արդեն տեղ է հասել,
Եվ չուզելով զուր սպասել
Ուչ մնացած ընկերներին,
Կապոցներն է քանդում-հանում,
Իր դույլերն է լավ լվանում՝
Աչքի տակով հետևելով
Ճվվացող տղաներին,
Որ աղմուկով, ուրախ ճիչով
Կանաչների, սեզի միջով
Թռչկոտում են, ծաղիկ քաղում,
Ընկնում, ելնում, տարված խաղում:

Մկրտիչն է հասնում շուտով
Վրնջացող իր աշխատով:
– Բարև, Հեղո՛ւչ:
 – Հազա՛ր բարի...
– Բարի գալ՞ուտ, ընկեր վարիչ...
– Բարի լո՛ւյս ձեզ:
 – Բարո՛վ հազար...

Ու դեռ չանցած մեկ-երկու ժամ,
Տեղ են հասնում բոլորն արդեն:
Չանցած ևս մեկ-երկու ժամ
Տեղավորվում, հանգստանում
Սա՝ հոլիկում, նա՝ վրանում
Ու ելնում են նորից ոտի՝
Սպասելով մեկն իր հոտին ,
Մեկը՝ դարձին իր կովերի,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀԱՇՏ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՏԻ ԱՐԱՏ ՁԷ	121
ՈՒՇԱՑԱԾ ԻՄ ՍԵՐ	161
ԵՐԳ ԵՐԳՈՅ	189
ՆԱՀԱՆՋ ԵՐԳՈՎ	209
ՖՐԱՆՉԵՍԿԱ ԴԱ ՌԻՄԻՆԻ	251
ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ	263
«ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՅ ԱՆՈՒՆ...»	507
ԵՌԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ	533
ԼՈՒՄԻՆ	599
ALLO ՄԱՅԱԿՈՎՍԿԻ	645
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	651

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
ՊՈԵՄՆԵՐ**

**ПАРУЙР СЕВАК
ПОЭМЫ**

**PARUYR SEVAK
POEMS**

*Կազմող և ծանոթագրող՝ Արմեն Ղազարյան
Խմբագիրներ՝ Սևակ Ղազարյան
Արմեն Ավանեսյան
Զևավորումը՝ Արմինե Քոչարյանի*

Չափսը՝ 60x84 1/16

Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.8 ծավալային կշիռով

Ծավալը՝ 41.0 տպ. մամուլ

Տառատեսակը՝ Barz

Տպագրվել է «Նովել» հրատարակչության տպագրատանը

Հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9 փ. տ. 23

Գինը՝ պայմանագրային



Ք. Երևան, Ծիրազի 24, 48 բն.

հեռ.՝ (+374) 10-34-73-35

էլ. փոստ՝ armav-hrat@mail.ru